

Խաչատուր Աբովյան

Պարապ վախտի խաղալիք

Կատուն ու մուկը

«Ընկել եմ ձեռքդ՝ դե ուտում ես, կե՛ր,
Էլ ի՞նչ ես խառնում իմ դառը ցավեր:
Գիտեմ, որ իմ վերջս էսօր հասել ա,
Խեղճ ձագս իր բնումն անտեր պետք է մնա»:
Ասեց մեկ խեղճ մուկն անիրավ կատվին,
Որ չանգել նրան դրել էր առաջին:
«Մկամ ուտիլս ա մենակ իմ ուզածն»,
Պատասխան տվեց կատուն չարացած:
«Ամեն մեկ ձենդ, էդ քաղցր ծվծվալդ
Որ անկաջս ընկնում, ու էդ թուլանալդ
Տեսնելիս՝ սիրտս էնպես ա ցնծում,
Հենց իմանում եմ, նո՛ր կյանք եմ ստանում»:—
Անգութ անիրավ իսանի սրտին
Ուրախություն է տանջիլն ընկերին:—